ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«06» Դեկտեմբեր 2017 թ. N 392-Հ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ, ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ԵՎ ԵՐԱՇՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը» և ի կատարումն Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի 2017 թվականի փետրվարի 23-ի նիստի N 24.9/395991-17 արձանագրության 3-րդ կետի հանձնարարականի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչությանը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկին՝

1) Սույն ծրագրի իրականացման նպատակով բանակցություններ վարել միջազգային դոնոր կազմակերպությունների, ազգային մակարդակով գործարարների, հիմնադրամների, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների հետ՝ անհրաժեշտ ներդրումների վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

<< 06>> << Դեկտեմբեր >> 2017 թ.
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարի
«06» հոկտեմբերի 2017 թվ. N 392-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ, ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ԵՎ ԵՐԱՇՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ի.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման գործընթացի կազմակերպումը խիստ արդիական է Հայաստանի Հանրապետությունում, քանի որ, գտնվելով մերձարևադարձային կլիմայական գոտու կենտրոնական չորային հատվածում, հանրապետության տարածքը կրում է տարածաշրջանի չորության բոլոր առանձնահատկությունները:

2. Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի գործողությունների արդյունավետությունը նախ և առաջ պայմանավորված է անապատացման դրսևորման հիմնական ձևերի, դրանց խթանող բնական, տնտեսական և սոցիալական պատճառների, ինչպես նաև բնապահպանական օրենսդրության մասին բնակչության իրազեկությամբ: Դրանով կապահովվի հասարակության կողմից շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների հետևանքների ընկալումը, որը թույլ կտա բնակչությանը գիտակցորեն ներգրավվել բնապահպանական հիմնախնդիրների լուծման աշխատանքներին:

3. Անապատացման գործընթացների նկատմամբ առավել խոցելի ոլորտներից է հանդիսանում գյուղատնտեսությունը: Արարատյան հարթավայրի ինտենսիվ օգտագործվող հողերը, այդ թվում՝ որպես տնամերձ հանդիսացող մշակելի հողերը, կազմում են 85.7 հազ.հա, որից գործնականում աղազուրկ են 70.7 հազ.հա: 15.0 հազ.հա տարբեր աստիճանի աղակալված են: Երկրորդային աղակալման են ենթարկվել այն տարածքների հողերը, որտեղ գրունտային ջրերը մոտ են հողի մակերեսին և այն տատանվում է 1.5-2.5 մետր խորության սահմաններում: Ջրամբարներից ու ջրանցքներից մեծաքանակ ֆիլտրացիոն կորուստները, ոռոգման տեխնիկայի բացակայությունը և հին եղանակների կիրառումը, ջրման նորմերի գերազանցումը և այլ պատճառները հանգեցրել են ստորերկրյա ջրերի արհեստական սնմանը: Երկրորդային աղակալման պատճառ են հանդիսացել նաև ցամաքեցուցիչների և կոլեկտորների ոչ մաքուր լինելը: Բացի այդ, հանրապետության 2 մլն.560.0 հազ.հա հողատարածքից՝ բացառությամբ արմատական ապարների ելքերի, ավազների, ճանապարների, շինությունների և այլն, տարբեր աստիճանի

հողատարված հողերը կազմում են 1 մլն. 112.7 հազ.հա կամ 44,0%: Ուժեղ հողատարում նկատվում է հիմնականում հարավային խիստ թեք և չոր լանջերում:

4. Անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը հնարավորություն կտա ակտիվ և բազմակողմանի երկխոսության միջոցով հասարակության շահագրգիռ կողմերին ներգրավել Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործընթացներում: Հարկ է նշել, որ դա համապատասխանում է <<Անապատացման դեմ պայքարի>> ՄԱԿ-ի կոնվենցիայի 2008-2018 թվականների 10-ամյա ռազմավարության 1-ին օպերատիվ նպատակին, որը ենթադրում է հողերի դեգրադացիայի վերաբերյալ համապետական և տեղական մակարդակներով քարոզչական, տեղեկատվական և լուսավորչական աշխատանքների իրականացում՝ նպատակային խմբերի որոշման և համախմբման եղանակով՝ օգտագործելով զանգվածային լրատվության ու հեռահաղորդացման միջոցները:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

5. Ծրագրի նպատակն է՝ անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման միջոցով նպաստել հասարակության տարբեր խմբերի ներգրավվածությանն անապատացման երևույթների մեղմացման/կանխարգելման գործընթացներում:

6. Ծրագրի խնդիրներն են՝

1) հասարակության տարբեր խմբերին տեղեկացնել անապատացման միջազգային, տարածաշրջանային և տեղական հիմնախնդիրների վերաբերյալ, ինչպես նաև հնարավոր սիներգիզմին՝ կլիմայի փոփոխության հետևանքների մեղմանն ուղղված կենսաբազմազանության հարմարվողականության միջոցառումների մասին.

2) անապատցման, հողերի դեգրադցիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների, օրենսդրության և կառավարման համակարգի առանձնահատկությունների լուսաբանումը.

3) բարձրացնել գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավված բնակչության իրազեկութունը նոր տեխնոլոգիաների վերաբերյալ, որոնք կնպաստեն անապատացման երևույթների, հողերի դեգրադացիայի և երաշտների ազդեցության մեղմացմանը.

4) Բարձրացնել բնակչության գիտելիքների մակարդակը երաշտի հետևանքով բուսածածկ տարածքներում հրդեհի առաջացման վտանգի և դրա կանխարգելման մասին.

5) մարզերում ակտիվացնել զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը՝ անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման ուղղությամբ.

6) ուժեղացնել համագործակցությունը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության միջև, բարձրացնելով բնակչության իրազեկությունն անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ.

7. Թվարկած խնդիրների լուծումը պահանջում է համապարփակ մոտեցում, որին կարելի է հասնել մարզերում անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման միջոցով նպաստել հասարակության տարբեր խմբերի ներգրավվածությանը անապատացման երևույթների մեղմման/կանխարգելման գործընթացներում կարողությունների բարձրացմանը:

8. Սույն ծրագրի կատարման պատասխանատուն Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունն է, իսկ իրականացնողը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությունը (այսուհետ՝ ԿԿԳ) և <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը (այսուհետ՝ ԲԾԻԳ ՊՀ):

9. ԿԿԳ-ն և ԲԾԻԳ ՊՀ-ն սույն ծրագրի իրականացման նպատակով պետք է միջոցներ ձեռնարկի ներգրավելու ազգային և միջազգային դոնորներին, կազմակերպի համապատասխան մասնագետների ընտրությունը և աշխատանքային խմբի ձևավորումը, խմբի անդամների հետ պայմանագրերի ստորագրումը, կազմի աշխատանքային խմբի անդամների տեխնիկական առաջադրանքները, իրականացնի վերահսկողություն և մոնիթորինգ աշխատանքների նկատմամբ, ընդունի կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

III. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

10. Սույն ծրագրով նախատեսված գործողություններն ընդգրկում են հետևյալ փուլերը.

1) **Աշխատանքային խմբի ձևավորման փուլ,** որի ընթացքում ԲԾԻԳ ՊՀ-ն իրականացնում է հետևյալ գործողությունները.

ա. ստեղծում է մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ինչպես ԲԾԻԳ ՊՀ-ի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները:

բ. Ընտրում է աշխատանքային խմբի ղեկավար – մրցութային հանձնաժողովի կողմից կազմվում է աշխատանքային խմբի ղեկավարի տեխնիկական առաջադրանքը, որը պետք է ներառի՝ աշխատանքի շրջանակների մանրամասն նկարագրությունը և ներկայացվող պահանջները: Աշխատանքային խմբի ղեկավարը պետք է տիրապետի անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրներին, այս բնագավառներում գործող օրենսդրությանը, կառավարման կառուցվածքին, ինչպես նաև Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Մշակում է գնահատման չափանիշները և հայտարարվում է մրցույթ: Մրցույթի արդյունքների հիման վրա աշխատանքային խմբի ղեկավարի հետ կնքվում է պայմանագիր:

գ. Ընտրում է աշխատանքային խմբի անդամներ – ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ մասնագետները՝ հողագետ, հիդրոլոգ, իրավաբան, օդերևութաբան-կլիմայագետ, բուսաբան, կենդանաբան, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան մասնագետ, հանրային առողջության ոլորտի մասնագետ, հանրային իրազեկության մասնագետ (բնապահպանության ոլորտում հանրային իրազեկության փորձ ունեցող լրագրող): Բացի այդ, աշխատանքային խմբում պետք է ընդգրկվեն նաև աշխատանքային խմբի ղեկավարը, աշխատանքային խմբի ղեկավարի օգնականը, համակարգչային ձևավորողը և հաշվապահը: Մրցութային հանձնաժողովը կազմում է մասնագետների տեխնիկական առաջադրանքները, որը պետք է ներառի՝ աշխատանքի շրջանակների մանրամասն նկարագրությունը, ներկայացվող պահանջները: Աշխատանքային խմբի անդամները պետք է տիրապետեն անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրներին, այս բնագավառներում գործող օրենսդրությանը, կառավարման կառուցվածքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Մշակում է գնահատման չափանիշները և հայտարարվում է մրցույթ: Մրցույթների արդյունքների հիման վրա աշխատանքային խմբի անդամների հետ կնքվում են պայմանագրեր:

2) **Նախապատրաստական փուլ,** որի ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները.

ա. Տեղեկատվության և հաղորդակցության արագ գնահատման նախապատրաստում - անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մարզերի հասարակության իրազեկության բարձրացման նպատակով առաջնահերթ կարևորություն պետք է տրվի հասարակության տարբեր շերտերի կարիքներին: Կարիքների ուսումնասիրության և գնահատման համար կազմվում են հարցաթերթիկներ:

բ. Ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի որոշվում են այն համայնքների ցանկը, որտեղ առաջնահերթ նշանակություն կունենան հասարակության իրազեկության բարձրացման միջոցառումները:

գ. Որոշել հասարակության այն շերտերը, որոնց շրջանակներում պետք է իրականացվեն իրազեկության բարձրացման միջոցառումները:

դ. Կարիքների գնահատման նպատակով ընտրված համայնքներում հանդիպումների կազմակերպում և հարցաթերթիկների լրացում:

ե. Լրացված հարցաթերթիկների մշակում և հասարակության իրազեկության բարձրացման համայնքային ծրագրերի թեմատիկայի ցանկի կազմում:

զ. Նախապատրաստական փուլի տևողությունը շուրջ 6 ամիս:

3) Հայաստանի Հանրապետության մարզերում զանգվածային լրատվության միջոցների գործունեության ակտիվացման փուլ, որի ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները.

ա. Համագործակցելով Հայաստանի Հանրապետության մարզերի տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) և <<Օրհուս>> կենտրոնների հետ՝ կազմակերպել հավաքներ յուրաքանչյուր մարզում գործող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ և քննարկել անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման անհրաժեշտությունը, զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվող տեղեկատվության թեմատիկան և այն մատուցելու ժամանակացույցը, աշխատանքային խմբի և զանգվածային լրատվության միջոցների համագործակցության պայմանները:

բ. Բարձրացնել մարզային զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կարողությունները՝ խթանելով Հայաստանի Հանրապետության տարածքում որակյալ հանրային իրազեկումն անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ:

գ. Սույն փուլի տևողությունը շուրջ 5 ամիս է:

4) Հայաստանի Հանրապետության մարզերի բնակչության իրազեկության բարձրացման Համայնքային ծրագրերի և դրանց իրականացման մեթոդների մշակում և տեղեկատվական ու ցուցադրական նյութերի պատրաստման փուլ, որի ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները.

ա. Համայնքային ծրագրերի մշակում – աշխատանքային խումբը պետք է հաշվի առնի մարզերի հասարակության կարիքների գնահատման արդյունքները և հասարակության տարբեր շերտերի առանձնահատկությունները:

բ. Համայնքային ծրագրերի մշակմանը զուգահեռ պետք է մշակի նաև այդ ծրագրերի իրականացման մեթոդները, որոնցում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել ոչ ավանդական տեխնոլոգիաներին, որոնք կվերաբերվեն ինչպես հասարակության տարբեր շերտերին, այնպես էլ դպրոցականներին, տարեցներին, կանանց և այլն: Մեթոդները մշակելիս պետք է նկատի ունենալ նաև համայնքային և մարզային ժողովների հնարավորությունները, երբ որոշակի քանակով մարդիկ հավաքվում են միասին:

գ. Համայնքային ծրագրերը պետք է ընդգրկեն՝ ծրագրի անվանումը, ծրագրի իրականացման վայրը, ժամանակացույցը, հասարակության շերտը, ծրագրի իրականացման մեթոդները, ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվող տեղեկատվական և ցուցադրական նյութերի անվանացանկը, ֆինանսական գնահատականը և ֆինանսավորման աղբյուրները:

դ. Տեղեկատվական նյութերի պատրաստում – կազմել հրատարակվող և նկարահանվող անհրաժեշտ տեղեկատվական նյութերի անվանացանկը, այն համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ԲԾԻԳ ՊՀ-ի հետ, ձեռնամուխ լինել դրանց թողարկմանը:

ե. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, մարզային զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կողմերի համար կազմակերպել սեմինար՝ ներկայացնելու Համայնքային ծրագրերը և տեղեկատվական նյութերը: Տեղեկատվական նյութերը պետք է լինեն հայերեն, գունավոր, պատկերազարդ և բարձրորակ տպագրությամբ:

զ. Սույն փուլի տևողությունը շուրջ 6 ամիս է:

5) Հայաստանի Հանրապետության մարզերում հասարակության իրազեկության բարձրացման համայնքային ծրագրերի իրականացման փուլ:

ա. Սույն փուլի տևողությունը շուրջ 7 ամիս է:

IV. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

11. Ծրագիրն իրականացվելու է դրամաշնորհային միջոցներով:

12. **Ծրագրի ֆինանսավորման աղբյուրներ** կարող են հանդիսանալ՝

1) ազգային մակարդակով գործարարների, հիմնադրամների, ոչ կառավարական և այլ կազմակերպությունների ներդրումները.

2) միջազգային դոնոր կազմակերպությունները.

3) ծրագրի իրականացումը կարող է կազմակերպել, ինչպես վերը նշված ֆինանսավորման առանձին աղբյուրների, այնպես էլ դրանց համատեղման հաշվին:

13. Ծախսերի ֆինանսավորման ուղղություններն են՝

1) աշխատանքային խմբի ղեկավարի և անդամների աշխատավարձերը.

2) գործուղման ծախսերը.

3) տրանսպորտային ծախսերը.

4) իրազեկման միջոցառումների իրականացման համար տարածքի վարձակալությունը (դահլիճի անհրաժեշտության դեպքում).

5) տեղեկատվական նյութերի թողարկման ծախսերը.

6) այլ ծախսերը:

14. Ծրագրի բյուջեն կազմվում է ֆինանսական աղբյուր հանդիսացող սուբյեկտի կամ սուբյեկտների հետ համատեղ:

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագրի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հնարավոր ռիսկային գործոնների մեղմացումից կամ կանխարգելումից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Ծրագրի իրականացման ռիսկային գործոնները, դրանց հետևանքները և մեղմացման կամ կանխարգելման գործողությունները

h/h	Ռիսկը	Հետևանքը	Մեղմացման կամ կանխարգելման գործողությունը	Գործողության պատասխանատուն
1	Ֆինանսավորման բացակայություն	Ծրագիրը չի իրականացվում	Դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարում	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն. ԲԾԻԳ ՊՀ.
2	Կարիքների գնահատումը կրում է ձևական բնույթ	Իրազեկման միջոցառումները չեն ծառայում իրենց նպատակին	ԲԾԻԳ ՊՀ-ն իրականացնում է պատշաճ վերահսկողություն կարիքների գնահատման գործընթացին	ԲԾԻԳ ՊՀ
3	Ծրագրի իրականացման գործընթացներում շահագրգիռ կողմերի հետ համագործակցության բացակայություն	Ծրագիրը չի ծառայում իր նպատակներին	Բացատրական և իրազեկման աշխատանքներ անապատացման,հողերի դեգրադացիայի սոցիալ-տնտեսական նշանակության վերաբերյալ	ԲԾԻԳ ՊՀ. Աշխատախմբի ղեկավար

VI. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԵԼԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

16. Ծրագրի կատարման վերստուգելի չափորոշիչներն են՝

1) Հայաստանի Հանրապետության մարզերի ընտրված համայնքներում կարիքների գնահատման արդյունքների վերլուծությունը.

2) Հայաստանի Հանրապետության մարզերի լրատվության միջոցների պարբերական թողարկումները անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ (յուրաքանչյուր եռամսյակում նվազագույնը մեկ թողարկում).

3) բնապահպանական ուղղվածության տեղական հասարակական կազմակերպությունները, գյուղացիական տնտեսությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, պետական կառավարման տարածքային ստորաբաժանումները ներգրավված են անապատացման երևույթների մեղմացման/կանխարգելման գործընթացներում.

4) Ֆիլմի և տեղեկատվական նյութերի առկայությունը:

VII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. Հայաստանի Հանրապետության մարզերում անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման ծրագրի իրականացման ընդհանուր արդյունքը բնակչության իրազեկության բարձրացումն է, որը կապահովի բնակչության լայն շերտերին ակտիվորեն ներգրավել որոշումների կայացման և դրանց իրականացման գործընթացներին: Այդ տեսակետից Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են.

1) անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների կարևորության վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի իրազեկության բարձրացումը.

2) բնակչությունը տեղեկացված կլինի անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրության մասին.

3) կբարձրանա տեղական ինքնակառավարման մարմինների, զանգվածային լրատվության միջոցների և մարզային հասարակական կազմակերպությունների պատասխանատվությունը անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների լուծման գործում.

4) գյուղատնտեսական արտադրությունում ներգրավված բնակչությունը կտեղեկանա անապատացման երևույթների, հողերի դեգրադացիայի և երաշտների ազդեցության մեղմմանը նպաստող նոր տեխնոլոգիաների մասին.

5) կամրապնդվի համագործակցությունը պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև՝ անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների լուծման հարցերում:

VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

18. Ծրագրի իրականացման մոնիթորինգի և գնահատման նպատակն է ապահովել նախատեսված ժամկետներում իրազեկման միջոցառումների արդյունավետ իրականացումը: Այն հնարավորություն կտա դասեր քաղել գործողությունների իրականացման արդյունքներից և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ ու ճշգրտումներ կատարել ծրագրում, միաժամանակ կապահովի համապատասխան գործընթացների օբյեկտիվությունը, թափանցիկությունը և կորպորատիվ պատասխանատվությունը:

19. Մոնիթորինգի ենթակա են ծրագրի շրջանակներում իրականցվող բոլոր գործընթացները:

20. Մոնիթորինգի իրականացման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունում ստեղծվում է մոնիթորինգային հանձնաժողով:

21. Մոնիթորինգային հանձնաժողովի գործունեությունը կարգավորվում է հանձնաժողովի կողմից մշակված և հաստատված գործունեության կանոնակարգով:

22. Ծրագրի գնահատումը կատարվում է մոնիթորինգային հանձնաժողովի կողմից:

23. Որպես գնահատման չափորոշիչներ կարող են հանդես գալ՝

1) ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման ժամկետների պահպանումը.

2) ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցների նպատակային ծախսերը.

3) իրազեկման գործընթացի անցկացման մասնագիտական չափանիշների պահպանումը/որակը/:

24. Գնահատման փուլերի ընթացքում հայտնաբերված գնահատման ցածր ցուցանիշների դեպքում մոնիթորինգային հանձնաժողովը գումարում է նիստեր և որոշում կայացնում համապատասխան գործողությունների վերաբերյալ: